# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30, թեժ գիծ +374 94347800 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 5

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 05-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 05-ի թիվ 2 նիստի օրակարգը:

2. Նոր Խարբերդ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային հաստատելու մասին:

3. Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 35 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

4. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

5. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

6. Նոր Խարբերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ընդհանուր օգտագործման տրամադրելու նպատակահարմարության մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30, բժժ գիծ +374 94347800 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 6

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՋՈՀՐԱԲՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**

Հավելված Նոր Խարբերդ համայնքի
ավագանու 2021 թվականի
փետրվարի 5-ի N 6 որոշման

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ........ 3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) ........ 8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021Թ. ԾՐԱԳԻՐԸ ........ 21
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ ........ 22
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ ........ 24

**Ներածություն**

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:[1]

Նոր Խարբերդ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է համայնքի ՏԻՄ-երի 2021թ. անելիքները համակարգելու նպատակով: Մասնավորապես, համայնքի ՏԱՊ-ի հիմնական նպատակներն են.

- սահմանել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

**1-ին բաժնում** սահմանվում են համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

**2-րդ բաժնում** ներկայացվել են համայնքի 2021 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

**3-րդ բաժնում** ներկայացված է համայնքային գույքի կառավարման 2021 թվականի ծրագիրը:

**4-րդ բաժնում** ներկայացված է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

**5-րդ բաժնում** ներկայացված է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

1 «Համայնքի ՏԱՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2021

**Համայնքի տեսլականը՝**

Նոր Խարբերդ համայնքը բարեկարգ և բարեկեցիկ համայնք է՝ զարգացած գյուղատնտեսությամբ ու ենթակառուցվածքներով, այն աչքի է ընկնում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման բարձր որակով:

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 19 | 11 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 29 | 32 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 8314 | 8683 |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ) | 3872.0 | 3872.0 |

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները**

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի՝ | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | |
| Նոր Խարբերդ համայնքում ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ | Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայությունների որակից, % | 90 | 95 |
| | Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի կազմում,% | 29 | 32 |
| **Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 2021 թվականի ընթացքում պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում** | | | |
| 2021 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը | Համայնքի կողմից պատվիրված կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդհանուր քանակը | 2 | 2 |
| | Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, % | 85 | 90 |
| **Ոլորտ 5. Հողօգտագործում** | | | |
| 2021 թվականի ընթացքում հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | |
| 2021 թվականի ընթացքում հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ** | | | |
| 2021 թվականի ընթացքում առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 8. Կրթություն** | | | |
| Ապահովել համայնքի մանկապարտեզի գործունեությունը, նպաստել որակյալ կրթական ծառայության մատուցմանը: | Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, % | 10 | 13 |
| | Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, % | 90 | 100 |

| | | | |
|---|---|---|---|
| | Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, % | 30 | 50 |
| **Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | |
| Ապահովել համայնքում մշակութային ծառայությունների մատուցումը | Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, % | 80 | 85 |
| **Ոլորտ 10. Առողջապահություն** | | | |
| 2021 թվականի ընթացքում առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | |
| 2021 թվականի ընթացքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին, բարելավել նրանց սոցիալական վիճակը | Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ | այո | այո |
| | Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, % | 90 | 100 |
| **Ոլորտ 13. Գյուղատնտեսություն** | | | |
| Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը, աջակցել ներդրումային ծրագրերի իրականացմանը | Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, % | 55 | 70 |
| **Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա** | | | |
| 2021 թվականի ընթացքում անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը, ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ | Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, % | 75 | 90 |
| | Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, % | 55 | 70 |
| **Ոլորտ 16. Զբոսաշրջություն** | | | |
| 2021 թվականի ընթացքում զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել | | | |
| **Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն** | | | |
| Ապահովել ՏԻՄ գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը համայնքի բնակիչներին, ներգրավել նրանց համայնքային որոշումների կայացման գործում | Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, % | 7 | 10 |

2. **Համայնքի 2021 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)**

Աղյուսակ 3. **ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով**

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | ԲԲՀ-ի բնակավայրը |
|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | |
| 1. | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում | 3872.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | **3872.0** | - |
| **Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում** | | | |
| 1. | 2021 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում** | | | |
| 1. | 2021 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| 1. | **Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում՝** ***Նոր Խարբերդ համայնքի լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ, Նոր Խարբերդ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում*** | 260000.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | **16060.0** | |
| **Ոլորտ 5. Հողօգտագործում** | | | |
| | 2021 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | | | |
| | 2021 թվականին տրանսպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ** | | | |
| | 2021 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ոլորտ 8. Կրթություն** | | | |
| | Նախադպրոցական կրթության կազմակերպում | 47176.0 | Նոր Խարբերդ |
| **Ընդամենը** | | 47176.0 | |
| **Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ** | | | |
| 1. | Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում | - | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | - | |
| **Ոլորտ 10. Առողջապահություն** | | | |
| | 2021 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | |
| | 2021 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն** | | | |
| 1. | Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին | 11500.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | 11500.0 | |
| **Ոլորտ 13. Գյուղատնտեսություն** | | | |
| 1. | Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում | - | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա** | | | |
| 1. | 2021 թվականին անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում | - | - |
| **Ընդամենը** | | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| **Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն** | | | |
| 1. | Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում: | 12080.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | 12080.0 | |
| **Ոլորտ 16. Զբոսաշրջություն** | | | |
| 1. | 2021 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում: | - | - |
| **Ընդամենը** | | - | - |
| **Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն** | | | |
| 1. | Տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցություն | Ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեից միջոցներ չեն պահանջվում | ընդհանուր համայնքային |
| | **Ընդամենը** | - | |
| **Ընդհանուրը** | | | |

**Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով**

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) | ԲԲՀ-ի բնակավայրը |
|---|---|---|---|
| **Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն** | | | |
| 1. | Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում | 9150.0 | ընդհանուր համայնքային |
| **Ընդամենը** | | 9150.0 | |
| **Ընդհանուրը** | | 9150.0 | |

**Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների**

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ոլորտ 1. Ընդհանուր** | | | | | |
| **Ոլորտային նպատակ**<br>Նոր Խարբերդ համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ | | **Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 95%<br>✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 32% | | | |
| **Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունները | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ | Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար | 2021թ. հունվար-2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓Դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ընդհանուր ծրագրերի թիվը, 3<br>✓ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 2%<br>✓Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը, 90%<br>✓Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում՝ 10%<br>✓Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը՝ 4 օր | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ | | | Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել |

<table>
<tr><td colspan="2">Միջոցառումներ (գործողություններ)<br>1. Աշխատակազմի պահպանություն<br>2. Համայնքի անշարժ գույքի կառավարում<br>3. Աշխատակազմում գործող տեղեկատվական համակարգերի շահագործում</td><td colspan="4">Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)<br>✓ Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր<br>✓ Համայնքապետարանի վարչական շենք 1</td></tr>
<tr><td colspan="6">Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</td></tr>
<tr><td colspan="6">2021 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</td></tr>
<tr><td colspan="6">Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</td></tr>
<tr><td colspan="6">2021 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում</td></tr>
<tr><td colspan="6">Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</td></tr>
<tr><td colspan="2">Ոլորտային նպատակ<br>Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը</td><td colspan="4">Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br>✓ Համայնքի կողմից պատվիրված կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդհանուր քանակը՝ 2<br>✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից, 65%</td></tr>
<tr><td colspan="6">Ծրագիր 1. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում</td></tr>
<tr><td>Ծրագրի նպատակ<br>Նպաստել համայնքում առկա ենթակառուցվածքների ընթացիկ մակարդակի պահպանմանը</td><td>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br>Բարեկարգ և անցանելի միջբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 98%</td><td>Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</td><td rowspan="2">Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</td><td rowspan="2">2021թ. հունվար-2021թ. դեկտեմբեր</td><td>Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են</td></tr>
<tr><td>Միջանկյալ արդյունք<br>Նոր Խարբերդ համայնքի փողոցների անվտանգ երթևեկության մակարդակը բարձրացել է, դրանք դարձել են հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար</td><td>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)<br>✓ Համայնքային ենթակայության ճանապարհներին և փողոցներին տեղադրված ճանապարհային նշանների թվի տեսակարար կշիռն անհրաժեշտ ճանապարհային նշանների թվի մեջ, 98%<br>✓ Բարեկարգ և անցանելի ներբնակավայրային փողոցների</td><td>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</td><td>Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 75%<br>✓ Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների թիվը՝ 7<br>✓ Փողոցների արտաքին լուսավորության համակարգի երկարությունը՝ 14 կմ<br>✓ Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 65%<br>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը՝ 3 ժամ<br>✓ Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ձմռանը՝ 5 ժամ | | | | |

| | |
|---|---|
| **Միջոցառումներ (գործողություններ)**<br>1. Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն<br>2. Բնակավայրում գիշերային լուսավորության համակարգի պահպանություն | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ, 5000.0 հազ. դրամ<br>✓ Համայնքապետարանից՝ փողոցների գիշերային լուսավորության անցկացման աշխատանքները կազմակերպող և վերահսկող աշխատակիցների թիվը՝ 2 |
| **Ոլորտ 5. Հողօգտագործում** | |
| 20221 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել | |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ** | |
| 2021 թվականին տրանսպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել | |
| **Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ** | |
| 2021 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել | |
| **Ոլորտ 8. Կրթություն** | |
| **Ոլորտային նպատակ**<br>Ապահովել համայնքի մանկապարտեզի գործունեությունը, նպաստել որակյալ կրթական ծառայության մատուցմանը | **Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, 20%<br>Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, 100% |

<table>
<tr><td colspan="2"></td><td colspan="4">Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, 30%</td></tr>
<tr><td colspan="6">Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության կազմակերպում</td></tr>
<tr><td>Ծրագրի նպատակ<br>Համայնքում ապահովել նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը</td><td>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br>✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը կենտրոն բնակիչներին, 30 %</td><td>Ծրագրի գնահատման համակարգ<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</td><td rowspan="2">Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար</td><td rowspan="2">2021թ. ապրիլ-2021թ. դեկտեմբեր</td><td>Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են</td></tr>
<tr><td>Միջանկյալ արդյունք 1<br>Նոր Խարբերդ բնակավայրում ապահովվել է նախադպրոցական կրթության ծառայություն մատուցող հաստատության բնականոն գործունեությունը</td><td>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)<br>✓ ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ 133<br>✓ Մանկապարտեզի խմբերի թիվը՝ 4<br>✓ ՆՈՒՀ-ում աշխատող աշխատակիցների թիվը՝ 22<br>✓ Մանկապարտեզում օրվա ընթացքում սննդի տրամադրման թիվը 3<br>✓ Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, դրական<br>✓ Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը շաբաթվա ընթացքում, 5 օր</td><td>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</td><td>Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</td></tr>
<tr><td colspan="2">Միջոցառումներ (գործողություններ)<br>1. Նոր Խարբերդ բնակավայրում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում</td><td colspan="4">Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)<br>✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 30.000.0 հազար դրամ<br>✓ Մանկապարտեզի գույքի միավորների թիվը՝ 350<br>✓ Մանկապարտեզի սանիտարահիգիենիկ պայմանների համապատասխանությունը նորմատիվ պահանջներին, այո</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="6">Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</td></tr>
<tr><td colspan="3">Ոլորտային նպատակ<br>Ապահովել համայնքում մշակութային ծառայությունների մատուցումը</td><td colspan="3">Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br>✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 80 %</td></tr>
<tr><td colspan="6">Ծրագիր 1. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում</td></tr>
<tr><td>Ծրագրի նպատակ<br>Ապահովել համայնքի մշակույթի տան ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների արդյունավետ կազմակերպումը և անցկացումը</td><td>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br>Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, 30%</td><td>Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</td><td rowspan="2">Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</td><td rowspan="2">2021թ. հունվար-2021թ. դեկտեմբեր</td><td>Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են</td></tr>
<tr><td>Միջանկյալ արդյունք 1<br>Համայնքի կենտրոնում կազմակերպվել և անցկացվել են տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ</td><td>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)<br>✓ Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից, 80%<br>✓ Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումների թիվը՝ նվիրված տոնական և հիշատակի օրերին 14<br>✓ Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների հաճախականությունը (ամսական կտրվածքով), 1-2 անգամ</td><td>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</td><td>Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</td></tr>
<tr><td colspan="3">Միջոցառումներ (գործողություններ)<br>1. Մշակույթի տանը գործող արվեստի և սպորտի 4 խմբակների գործունեության ապահովում</td><td colspan="3">Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)<br>✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 12770.0 հազար դրամ</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. Նոր Խարբերդ բնակավայրում տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում և անցկացում | | ✓ Մշակույթի տան շենքի 1<br>✓ Միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորումների թիվը 35 | | | |
| **Ոլորտ 10. Առողջապահություն** | | | | | |
| 2021 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել | | | | | |
| **Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ** | | | | | |
| 2021 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել | | | | | |
| **Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն** | | | | | |
| **Ոլորտային նպատակ**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին, բարելավել նրանց սոցիալական վիճակը | | **Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Սոցիալական ծրագրի առկայությունը, այո<br>Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, 85% | | | |
| **Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Բարձրացնել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության մակարդակի բարձրացում 15 %-ով | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար | 2021թ. հունվար-2021թ. դեկտեմբեր | Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Բարձրացել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը՝ 53<br>✓ Սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմումներ ներկայացնողների թիվը՝ 53<br>✓ Սոցիալական աջակցություն ստացող հաշմանդամների թիվը՝ 25<br>✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի<br>✓ Սոցիալական ծրագրի շահառուների | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ | | | Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են եղել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բավարարվածությունը իրականացվող ծրագրից, 80%<br>✓ Սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմումներ ներկայացնողներին պատասխանելու ժամկետը, 3օր | | | | |
| **Միջոցառումներ (գործողություններ)**<br>1. Սոցիալական աջակցություն հաշմանդամներին<br>2. Սոցիալական աջակցություն սոցիալապես խոցելի ընտանիքներին | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր, հազ. դրամ 7000.0 | | | |
| **Ոլորտ 13. Գյուղատնտեսություն** | | | | | |
| **Ոլորտային նպատակ**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը, աջակցել ներդրումային ծրագրերի իրականացմանը | | **Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Համայնքի մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նշանակության հողերի ընդհանուր մակերեսի մեջ, 55% | | | |
| **Ծրագիր 1. Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում** | | | | | |
